

ՄՈՒՆՋ՝ ԱՂԵՏԻՆ ԴԻՄԱՑ

ՌԻԹԱ ՈՐԲԵՐՅԱՆ (ԱՄՆ)

1993 թ. ԱՄՆ-ում լույս տեսավ հայ գրականության և քննադատության տոքսոթր Ռուբինա Փիրումյանի նոր գիրքը՝ Literary Responses to Catastrophe. A Comparison of the Armenian and the Jewish Experience (Աղետին անդրադարձը գրականության վրա. բաղդատական մը հայկական ցեղասպանության և հրեական ողջակիզման միջև): Գիրքը հրատարակված է հովանավորությամբ UCIA G. E. Von Grunebaum Center for Near Eastern Studies (Scholars Press, Atlanta, Georgia).

Փիրումյանի այս հատորը արդյունք է քանի մը տարիներու լուրջ և հոգեմաշ ուսումնասիրություններու: Զինված ակադեմիական դրական քննադատության մեթոդաբանական գիտելիքներով հարգարժան տոքսոթրը մեր ընթերցող հանրությանը հրամցուց արժեքավոր աշխատություն:

Հատորի նյութերուն ցանկը կանխող Ավետիս Ահարոնյանի «Կուլյր Աշուղը» քերթվածին հետևյալ երկու տողերը՝ «...Այսքան արյուն թե ձեզ ներքին մեր որդիք, Թող ողջ աշխարհ հային կարգա նախատինք»՝ շատ ամփոփ կենրկայացնեն հեղինակին դրդապատճառներն ու հոգեկան փեճակը՝ գրական երկունքի նախօրյակին: Ինքզինք իր սեփական խղճահարուժյան և աշխարհի նախատինքին» չենթարկելու վճռականությունը պատճառած է ծնունդը այս երկին, ուր դեմ-դիմաց զիրար կգտնեն XX դարու առաջին կիսուն գործադրված մեծագույն երկու ոճիրները հանդեպ երկու հավաքականություններու, որոնց ճակատագիրներու հանգիստությունը և ոճիրներուն անդրադարձը—ազդումը—իրենց գրականություններուն ձևին և խորքին վրա՝ ընթերցողին կենրկայացնեն նյութին մոտեցումի հետաքրքրական և աննախընթաց տեսանկյուն մը:

229 էջերի բաղկացած այս հատորը բաժնված է յոթ գլուխներու, որոնց ավարտին ընթերցողը կգտնե ուսումնասիրության եզրափակումը, բժախընդրորեն պատրաստված մատենագիտությունն ու հատուկ անուններու ցանկերը (bibliography and index):

Ինչո՞ւ այս բաղդատությունը հայկական ցեղասպանության և հրեական ողջակեզին միջև: Արդյո՞ք կարելի չէր վերցնել հայկական նյութը առանձինն և փորձել գնահատել Աղետին ազդումը հետ-եղեռնյան հայ գրականության վրա: Այս հարցումին հեղինակը հետևյալ բացատրությունը կուտա իր հառաջաբանին մեջ. «Որքան խորացա հայ գրականության վրա Աղետի ազդումի պրպտումիս մեջ, այնքան ավելի անդրադարձա, որ գրական պատկերի մը գեղեցկությունը, գրական երկի մը միասնությունը, կամ լեզվի մը հարբստությունը դատելու սովորական գործիքները անատակ կմնային ընտրված ողբերգական նյութին պարագային: Անդրադարձա թե կարգ մը պարագաներու, երկերու լեզվին պրտորությունը, անատակությունը, նույնիսկ, անդա-

մալուծումը ավելի նպատակահարմար ձևով կարտահայտեին ցեղասպանության ծայրահեղ բրտության և խժոժության քառասյին և սադայելական մեթոդներով: Հայ գրական քննադատության մեջ առաջնորդի մը, մեկնաբանության մեթոդաբանության մը կամ ցեղասպանության դրականության պատշաճ տեսանկյուն մը գտնելու ապարդյուն փնտռություն քայլերս առաջնորդեցին Ողջակեզի գրականության մասին հրեական մոտեցման» (Թարգմ. Ռ. Ո.): Հեղինակը կհայտնե նաև թե, հրեական հարուստ այս գրականության մեջ զինք ամենեն ավելի տպավորողը երկու ցեղասպանություններու դրդապատճառներուն, հղացումին և գործադրության մեթոդներուն միջև հայտնաբերվող զուգահեռներ չէին, որոնք արդեն իսկ արծարծված և ուսումնասիրված էին հայ և օտար մտավորականներու կողմից: Հեղինակին համար հետաքրքրականը երկու աղետներու ազդումն էր իրենց գեղարվեստական գրականություններուն վրա, պատմության ողբերգական անկյունադարձներուն:

Հիմնվելով հրեա երկու գրականագետներու՝ Տեյվիտ Ռասքիզի և Ալըն Մինթցի կոթողական երկերուն վրա, տոթթ. Փիրումյան, ինք ևս կհամոզվի, որ աղետին անդրադարձը տվյալ ժողովուրդի մը գեղարվեստական գրականության վրա պետք է սկսիլ փնտռել այդ ժողովուրդի պատմության առաջին իսկ տողերեն: Աղետին ազդումը գրականության վրա չի կրնար վերաբերիլ միայն մեկ աղետի, մեկ դեպքի: Վերջին աղետին ազդումը միայն տրամաբանական հետևանքն է նախորդ աղետներու անդրադարձին և տվյալ ժողովուրդի հոգեբանական բարդ վիճակներուն: Անդրադարձը կպայմանավորվի տվյալ ժողովուրդի կրոնական, ընկերային, աշխարհագրական և քաղաքական վիճակներով, որոնց ենթադրված է ան հազարամյակներու իր գոյության ընթացքին:

Այսպես է, որ Փիրումյանի հատորին առաջին մասը պատմության հունին վրա կպեղե անցյալի աղետներու անդրադարձները հայ ժողովուրդի գրականության վրա: Իսկ երկրորդ մասով հեղինակը կքննե հետ-եղեռնյան գրականութենեն շորս հեղինակներու գործերուն վրա Մեծ Աղետին ազդումը: Երկու մասերուն մեջ ալ, թե՛ պատմական, թե՛ ադրդի գործերուն մեջ հեղինակը սերտ քայլ կպահե և զուգահեռ կառաջանա հրեական աղետներու գրականության հետ, հանգելու համար վերջին աղետին՝ 1939—40 Հրեական Ողջակեզի ազդումին նույն ժողովուրդի գրականության վրա:

Զուգահեռ այս քննութենեն երևան կուգա, որ իրերահաջորդ աղետներու ենթարկված այս երկու ժողովուրդներու գոյապահպանման և ապրելու գաղտնիքը կկայանա հետևյալ երևույթին մեջ: Երկուքն ալ, վերապրելու, արհավիրքներեն ֆիզիքապես և մտքով կենդանի դուրս գալու համար, հավաքական ճիգով մը փորձած են իմաստով մը օժտել աղետը, պատճառի մը տարազը գտնել: Երկուքին ալ պարագային, մանավանդ սկզբնական պատուհաններու վաղորդայնին, պատճառ-արդյունք պրպտումը տված է «մեղք-պատիժ» տարազը: Կրոնական ոլորտով հագեցած այս երկու հավաքականություններուն, մանավանդ քրիստոնյա հայության համար, մարդկային հոգեկան և բարոյական չափանիշները ցծված էին Ս. Գրոց դաստիարակությամբ, մանավանդ Հին Կտակարանի ճամբով:

«Հարելով Քրիստոնեության, հայերը գտան Ամենակարող Աստվածը, արարիչը և պաշտպանը աշխարհի բոլոր արարածներուն: Անոնք որդեգրեցին արարիչին և արարածին միջև գտնվող նույն փոխ-հարաբերությունը և բա-

րոյական նույն սկզբունքները, զորս ընդգրկած էր Իսրայելի ժողովուրդը միաստվածյան հավատքի իր երկար պատմության ընթացքին: Աստված մարդը ստեղծեց իր պատկերով և այնպես սիրեց և պաշտպանեց զայն, իր նախընտրած և լավագույն ստեղծագործությունը և, ինչպես դաշինքով, պարտազրեց որ ան մնա հավատարիմ իրեն և հնազանդի իր պատվիրաններուն», կըսե ֓իրումյան: Հրեաներու մարգարեները զգուշացուցած էին Իսրայելի ժողովուրդը, որ եթե մեղանշեր Աստուծո, Ան հրեաներուն մեծ պատուհասներ պիտի բերեր, որոնցմե շատ քիչեր պիտի փրկվեին: Աստուծո դատաստանը պիտի ըլլար աններող հանդեպ անոնց, որոնք պիտի դրժեին Ուխտը, որ կնքված էր Աստուծո և մարդոց միջև:

Ուրեմն, պատուհասները—այս պարագային՝ աղետները—կնկատվեին Աստուծո սահմանած պատիժը, որ պիտի սրբեր մարդոց մեղքերը:

Իրենց մարգարեներուն առաջնորդությամբ, հրեաները հավատացին Ուխտին և համբերությամբ ընդունեցին յրկված պատիժը: Բայց, երբ պատիժները իրարու հաջորդեցին, մարդոց նախնական այս հավատքը խախտեցավ, այնքան մեծ էր աղետը, այս պարագային՝ Նրուսաղեմի առումը (587 Ք. ա.): Հրեաները կարծեցին որ, այս անգամ, Աստված դրժած էր Ուխտը և լքած իր ժողովուրդը: Եվ ստեղծվեցավ «Լանւթի ժանըր» (Lamentation) Լւնտին ահագնության դիմաց, ապրեցավ խոսքի տաքնապ մը:

Խոսքի կաս արտահայտության տաքնապը կամ անդամալուծումը բնական երևույթ է աղետներու պարագային: Լեզուն կպապանձի և անատակ կհառնա նկարագրելու աղետը: Ահա այս է հեղինակին մանրամասն և բծախնդիր գործին նպատակը, զոր իրագործելու համար, ֓իրումյան կարգով զուգահեռներ կգծե հայ և հրեական աղետի գրականություններուն միջև և կհաջողի: Զուգահեռները երբեմն հանգիստություններ կպարզեն, իսկ երբեմն տարբեր ուղղություններ կառնեն, հիմնված յուրաքանչյուր ժողովուրդի կրոնական և քաղաքական հոգեմիջակի վրա:

Քրիստոնեական իր գրականության սկզբնական դարերուն, հայ ժողովուրդը ևս հավատարիմ մնաց Աստծո հետ իր Ուխտին, ինչպես կտեսնենք Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գործին մեջ: Եղիշե պատերազմը կնկատե Աստուծո պատիժը՝ ուղղված մեղավոր ժողովուրդիս: Նույն հղացքը կորդեգրե Մովսես Խորենացի իր Հայոց պատմության մեջ: Եվ, ինչպես հրեա մարգարեները, հայ պատմիչները ևս թշնամին կնկատեն Աստուծո յրկած պատիժին գործիքը: Այսպես, հայկական և հրեական ողբերը կթալեն զուգընթաց, հետեւելով ժանրի նույն հրամայականներուն, որոնցմե կարելի է հիշել վերացական հղացքներու «անձնացում»-ը (personification): Հաջորդող վարերուն, Եղիշեին և Խորենացիին կհետեւին Ղեոնդ Պատմիչ, Արիստակես Լաստիվերտցի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Նարեկացի, Աբրահամ Անկյուրացի, Առաքել Բաղիշեցի, Ստեփանոս Օրբելյան և Ֆրիկ, Թեև, հրեական գրականության մեջ հայտնաբերվող ամոթի և նվաստացումի զգացումը չերևիր հայ գրականության մեջ, ուր այդ զգացումը կփոխարինվի ազգային հպարտության զգացումով:

Հաջորդ հանգրվանը հրեական գրականության մեջ մարտիրոսության գաղափարն է, որ կմխիթարե աղետին զոհերը: Մինչ հայկական ավանդության մեջ, Քրիստոնեության մուտքով, մեղքի և պատիժի հղացքին առընթեր,

որդեգրված էր նաև մարտիրոսության հղացքը: Միշտ հետևելով Ս. Գրքին, Մակարայեցվոց պատմությունը հաճախ կհիշվի Մովսես Խորենացիի, Հովհաննես Կաթողիկոսի, Թովմա Արծրունիի, Անանիա Շիրակացիի և Ստեփանոս Ասողիկի գրություններուն մեջ:

Զուգահեռները կշարունակվին և հեղինակը, իբրև բժախնդիր պրպտող, կշարունակե ամբողջին մեջեն երևան հանել ազգային դրոշմ կրող տարբերությունները: Մինչ հայը, հետևելով Քրիստոսի հարության օրինակին, մարտիրոսության մեջ անմահություն կփնտռե, հրեային մոտ այդ հղացքը այնքան ալ հստակ չէ, որովհետև հրեան տակավին կսպասե իր Մեսիայի գալըստյան: Նաև, հայուն մոտ հարության գաղափարը անպայման կրոնական իմաստով հագեցած չէ: Այսպես, միջնադարյան հեղինակ Ֆրիկ չի մերժեր աշխարհի վրա դրախտային կյանքի մը կարելիությունն ու հույսը:

Հատորի առաջին մասի երկրորդ գլուխով, Փիրումյան արդեն կանցնի հայկական և հրեական մտավորական զարթոնք երուն որոնք, ժամանակագրական տեսակետից կիյնան նույն թվականներուն՝ XIX դարու սկզբնավորությունը: Նոր մտավորականները, որոնք վերածնունդ և արդիականացում կդավանեին, այլևս կմերժեին կրոնական հին դպրոցներու մոտեցումը աղետներուն:

Ըստ Փիրումյանի, հակառակ նմանություններուն, հայ և հրեա մտավորականներու առաջարկներուն միջև կար հիմնական տարբերություն մը: Մինչ հայերը ջատագով էին ազգային գիտակցության ամրապնդման, հրեաները կջանային իրենց քրիստոնյա դրացիներուն հետ հասկացողության եզրեր գտնել՝ ի սեր համերաշխ գոյակցության: XVII դարեն սկսյալ, Իսրայել Օրիի, Հովսեփ Էմինի և Շահամիր Շահամիրյանի հայ ազատագրական պայքարը շեփորող գործունեությունը հայ գրականության մեջ շարունակվեցավ Խաչատուր Աբովյանով, Ղեոնդ Ալիշանով, Մեսրոպ Թադևոսյանով, Ստեփանոս Նազարյանով, Գամառ Փաթիպայով և Միքայել Նալպանդյանով և հետզհետե հեռացավ կրոնական ընդլայնում: Թեև, շարժումը միշտ ալ ունեցավ իր հակառակորդները, ինչպիսին էին Տերոյենց Պատվելի և Հովհաննես Հիսարյան: Ինքնապաշտպանության համար զինյալ պայքարի գաղափարը հրեաներուն մոտ երևան եկավ միայն XX դարու սկզբին հրեական «փոկրոմ»ներեն (ПОКРОМ) ետք, երբ հրեա գրող Պիալիք իր ժողովուրդին կրավորականությունը կոչեց «վախ և վատություն» և հարցը դուրս բերավ կրոնքի ծիրեն: Այն ատեն է, որ երկու ժողովուրդներու հակազդեցությունները աղետին՝ մոտեցան իրարու:

Մինչ այդ սակայն, երկու ժողովուրդներն ալ տակավին չէին դիմագրաված մեծագույն աղետները՝ Ցեղասպանությունը և Ողջակեզը: 1894-ին տկսած հայկական ջարդերը, որոնք պիտի հանգեին 1915—18-ի ցեղասպանության ծրագրի գործադրության, կերևեին հորիզոնին վրա: Իսկ, Համաշխարհային Ա. պատերազմին հրեաներուն կրած կորուստները առ հավետ խզեցին այս վերջիններուն կապերը ավանդական մոտեցումեն և Աստուծո հետ Ուխտեն: Պետք էր ֆիզիքական գոյությունը պահպանել և վախը չծածկել կրոնական պատրվակներով: Համենայն դեպս, աղետին դիմաց գրողներու հակազդեցությունը միշտ ապշահար լռությունն էր և ստեղծագործ երևակայության բռնաբարումը: Ժամանակի որոշ հեռավորություն պետք էր բանալու համար լեզուները: Ծիշդ այս պատճառով էր, որ ջարդերու առաջին նկարագրություն-

ները հրատարակվեցան արևելահայ գրողներուն կողմէ, հիմնված արեւմտահայ գաղթականներու ականատեսի վկայութիւններուն վրա: Այս դեպքերէն ետք, արեւմտահայ դրականութիւնը ուղղութեան հիմնական փոփոխութիւն կկրէ:

Զուգահեռներու իր մնայուն հետապնդումին մեջ, տոքթ. Փիրումյան կընէ երկու կարճ այլ՝ նույնիմաստ մեջբերումներ. մեկը՝ Ավետիս Ահարոնյանէն, երբ մահամերձ Թաթուլ կըշնչա թէ... մի... աղոթեք... Աստուած կնե-րն ձեզի», մյուսը՝ հրեա գրող Ուայսընպրկէն. «Ալ սաղմոսներ պետք չեն... միայն զենք, իսկական զենք»: Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց»-ը հատկանշական մեկ արտահայտութիւն է այս նոր հոգեբանութեան, որ նաև կբացատրէ Սիւսանթոյի և Դանիել Վարուժանի դէպի հայ հեթանոսութիւն հետադարձ ակնարկը: Այս լուսարձակին տալ պետք է դիտել նաև հրեա հետեւյալ երեք տեսակի հերոսներու դեմքերը. «պսալ-կուֆ» (գործոն հերոսը), «շլըմիլ» (միայն խոսող և գործի անատակ հերոսը) և «թալուշ» (ծուլ մտավորականը կամ փրկւածի, որ ոչ մեկ շարժումի կմասնակցի):

Փիրումյանի հատորին այս առաջին մասը հարուստ է այսպիսի շատ հետաքրքրական զուգահեռներով՝ հանգիստութիւններու և տարրերութիւններէն երո՛ւ բոլորէ մէկ հիմնված մասնագիտական և շնորհիւ փաստագրութիւններու վրա: Յաւուս նյութեր, որոնք սակայն կկարգացվին «գիտական հանուցով», որ աւելում թա՛ հայկական, թե՛ հրեական աղբյուրներու ընտրութիւնը կատարեն հեղինակին բծախնդրութիւնը և հմտութիւնը գիտական հետազոտման մեջ: Պիտոր կամ աղոտ նյութեր կամ բացատրութիւններ չկան: Խեղճ հեղինակին ասպարեզին իսկ բերումով, երկրաշարժական գիծերու հըստակութիւն մը կտիրապետէ ամբողջ գործին և զայն կդարձնէ դյուրընթեռնելի:

Հատորին երկրորդ մասով, տոքթ. Փիրումյան կփորձէ և կհաջողի մատնանիշ ընել Աղետին ազդումը Զապել Սոսյանի, Սուրեն Պարթևյանի, Արամ Անտոնյանի և Հակոբ Օշականի գրականութեան վրա, անկէ հանելով հայ անհատին և հայ հավաքականութեան վրա նույն աղետին անդրադարձը, միշտ պեղելով ժամանակակից և ճակատադրակից հրեական գրականութիւնը:

Հատորին կեսը կազմող այս երկրորդ մասին բաղկացուցիչ գրողներու ցանկը ուսումնասիրութեան նպատակին համար կրնա համապարփակ շփիլ, ալոհահանդերձ ընտրված գրողները կթվին ներկայացուցչական ըլլալ նկարագրային, աշխարհագրական, գաղափարախոսական և այլ լիարժեք ոլորտներու՝ հայ կյանքին մեջ: Կին մը՝ Զապել Սոսյան, հրապարակագիր մը՝ Սուրեն Պարթևյան, հեղափոխական աքթիվիստ մը՝ Արամ Անտոնյան և վիպագիր մը՝ Հակոբ Օշական: Այս շորս գրողներու գործերուն ընթերցումը հեղինակը կմղէ հաստատելու ֆրանսացի քննադատ Ժաք Լաքանի այն վարկածը թե՛ ողբը կխորհրդանշէ կորուստ մը, որ բառացի կերպով կհայտնաբերվի լեզվին մեջ, ինչպես լուսնին է, մունջը, պապանձումը՝ իբրև հակադրացութիւն աղետին:

Սոսյանի այս տեսակետէն հատկանշական գործը կմնա «Ավետիկներուն մէջ» նկարագրական-փաստագրական հատորը, որ ան կըսէ. «Ինչ որ տեսա՝ երևակայութենէ վեր բան մըն է... ինձի համար դժվար է (աղետին) ամբողջական պատկերը ներկայացնել: Բառերը անկարող են արտահայտել

ահավոր և աննկարագրելի տեսարանները՝ որոնց ականատես եղա՝ Այսուհանդերձ, այն քիչը զոր կնկարագրեմ ծայան, ցույց կուտա թե տակավին կրոնական բացատրությունը աղետին՝ կհամենա զոհերու մտքին և հոգիին մեջ տակավին կփնտովի «մեղք-պատիժ» տարազին բացահայտումը՝ իբրև մխիթարություն։ Ծայան նույնիսկ հաճախ կունենա այն պոռթկումը, թե ազգին որ մեղքերուն համար է այս պատիժը։ Այսուհանդերձ, ան զոհերը չի նկատեր մարտիրոսներ։ Իր մոտեցումը ավելի վերլուծական, քննադատական և իրապաշտ է, որ կմոտենա Ա. պատերազմի հրեական «փոկրոման»-ը՝ ականատես գրողներու հակազդեցության։ Թեև Ծայան հազվադեպորեն կարծարծե դեպքերուն հտին գտնվող քաղաքական դրդապատճառները, այնուհանդերձ ազատության և արդարության համամարդկային տենչերը կարտացոլան իր էջերին։

Տարբեր տեսակի մոտեցում ունի Սուրեն Պարթևյան, որ կմեղադրե սփյուռք ապաստանած հայերը, որոնք հանգստավետ և մեղկ կյանք մը կանցնեն օտար երկրներու մեջ։ Թեև, քննադատության կողքին, ան կընենա և կնկարագրություններ, որոնք թուրքը կգամեն ամոթի սյունին։ Այդուհանդերձ, շեշտը դնելով Եղեռնի վաղորդային հայ ժողովուրդին և սփյուռքի մեջ վարած անոր կյանքին վրա, Պարթևյան որոշակի կխուսափի աղետի նկարագրութենեն և այսպես կհիշեցնե Ողջակեզը կանխող հրեա գրողներու հակազդեցությունը աղետին։

Իր հետազոտության հենթարկված հայ գրողներու գործերուն մեջ, Փիրումյան մեծ աղետին ազդումը կգտնե ոչ միայն այդ գործերու գոյության ալ նաև՝ բացակայության մեջ։ Հետաքրքրական մոտեցում մը, որ կրնա արդարանալ Փիրումյանի այդ գրողներու գործերուն և տաղանդին քաջածանոթ ըլլալու իրողությամբ։ Այլապես, անհեթեթ պիտի ըլլար գրողի մը չգրած գործեն կամ խոսքին բացակայութենեն եզրակացություններու հանգիլ։

Հակառակ Ծայանի, որ աղետին պատճառը կգտնե թուրքը բնորոշող ազգային նկարագրին մեջ, Պարթևյանի համար հայ ժողովուրդի ստրուկի հոգեբանությունն է, որ զայն առաջնորդած է ողբերգության։ Հետևաբար, արթննալու և ըմբոստանալու անհրաժեշտությունը կմատնանշվի Պարթևյան-հրապարակագրի գրության մեջ։

Անտոնյանի գործերուն մեջ, թուրքը իր անունով չերևիր, բայց անոր ներկայությունը բացահայտ է։ Պարթևյանին պես, Անտոնյան ևս կթեքի դեպի աղետին ներքնականացումը (internalization), բայց, հակառակ Պարթևյանին, Անտոնյանի մեղադրանքը շուղղվիր դեպի փախստականներու ապաստանարան՝ սփյուռքին։ Անտոնյան կմեղադրե ոճիրին զոհ հայերը, վերապորոշները, որոնք աղետեն հտք անասնական բնազդներով կապրեին, ֆիզիքական և բարոյական աղտի և ցեխի մեջ, որուն զուգահեռը Փիրումյան կտեսնե հրեա Ռասքիզի վերլուծման մեջ, որ կակնարկե վերապրելու սիրոյն հրեա ժողովուրդի ապաբարոյացման։

Ըստ հեղինակ Փիրումյանի, միայն Հակոբ Օշականն էր, որ անդով պատասխան կփնտներ գլխավոր իր երկու հարցումներուն, որոնք էին՝ թուրքը ինչու գործեց այսքան անմարդկային ոճիր մը և ինչ ազդեցություն գործեց այդ ոճիրը հայ ազգի մնացորդացին վրա։ Սույն հարցումներուն պատասխանը Օշական փորձեց տալ իր երկարաշունչ այլ՝ ընդհատված փեպով՝ «Մնացորդացում»։ Փիրումյան կփորձեց այս ընդհատումին ալ պատճառը տես-

նեւ ոճիրը նկարագրելու լեզվի անատակութեան մեջ, իբրեւ աղետի ազդում գրականութեան վրա. դարձյալ փորձելով բացակայող գործին եզրակացութիւններու հանգիլ:

Նույնը կրնն նաեւ փարիզահայ քննադատ Մարկ Նշանյան, որ կրսն թե, Օշականի համար մահվան մասին խոսիլ կնշանակէր ուղղակի մահվան երթալ: Ասոր համար էր, թերեւ, որ Օշական իր սկզբնական գործերուն մեջ որոնք գրած էր վերացական պատկերներու ներկայացումը, ֆիզիքական և հուզական հեռավորութիւն մը դնելով իր և գեղեցիկուն միջև: Նույնիսկ իր բոլոր անկատար խոստումները նկատի առնելով, Օշական կամա Աղետի Գրականութեան գագաթը, իր գլուտերով և ինքնուրույն մոտեցումներով: Օշական աղետին պատճառը կգտնէ թուրքին նկարագրին մեջ:

Օշական եղավ միակ զրոյը, որ իր գործերուն մեջ թշնամի թուրքը «թուրք» կոչեց և այդ անունը նկատեց ոչ իբրեւ նշան ազգային պատկանելիութեան, այլ իբրեւ սորակական ածական: Կրսն Փիրումյան և կավեցնէ թե, ըստ Օշականի, աղետը հասկնալու համար, պետք է ճանշնալ թուրքը: Իր այս կարծիքով, Օշական կշրե նախագո բոլոր բացատրութիւնները, մեղք-պատիժ հղացքը, մարտիրոսութեան միսթարանքը, ինքնամեղադրումի գործը, որոնք բոլորն ալ կձգտին մեկ բանի. շանվանել թշնամին, հետեւաբար՝ չդիմակայել թշնամին:

Հրեական գրականութեան մեջ, Փիրումյան Օշականի զուգահեռ կրնն Եւրի Զվի Կրինպլըկը: Այլ մակարդակներու վրա ևս, հեղինակը կգտնէ այլ զուգահեռներ երկուքին միջև: Այսպես, երկուքին գործն ալ կոթողական է, երկուքն ալ դժվար ընթեռնելի են: Եվ ցարդ ոչ ոք համարձակած է զանոնք ուսումնասիրել մենագրութեան մը մեջ:

Ռուբինա Փիրումյանի՝ իր տեսակին մեջ եզակի բաղդատական այս ուսումնասիրութիւնը կձգտի երկու բանի: Առաջինը գրականութեան և արվեստի ճամբով հաշտվիլն է Աղետին հետ: Ոչ այն կրավորական հաշտութիւնը, այլ այն, որ ճիշդ հարցադրումներով, կմղե հայ մտավորականը վերլուծման և բուժիչ պատասխաններ գտնելու մեծ ոճիրի ինչուններուն և ինչպեսներուն, որպեսզի կարելի ըլլա փակել հայ պատմութեան և գրականութեան ողբերգական այդ էջը, և վերապրումը հավիտենականացնելու միջոցներուն ձգտիլ արվեստի, լեզվի և գրականութեան ճամբով: Մեկ խոսքով, իր այս գործով, հեղինակը ըսել կուզէ թե, հայ ազգը, իր ժողովուրդով և մտավորական ընտրանիով կամա մխրճված թանձր տիղմի մը մեջ, որմն ձերբազատումը միայն կրնա երաշխավորել նույն ազգին ֆիզիքական և մշակութային կյանքի նորոգումն ու հավերժացումը:

Հեղինակին երկրորդ նպատակն է՝ հենվելով հայ բազմադարյան գրականութեան և անոր հոլովութիւն վրա, օրինակներով ցույց տալ, թե տիղմն դուրս գալու միակ միջոցը հայ ժողովուրդի զինյալ ապստամբութիւնն է ամեն տեսակի բռնարարներու և զանոնք գործադրող հավաքականութիւններուն դեմ: Սույն վարկածը արժեվորելու համար, ան օգնութեան կկանչէ հրեական գրականութիւնը, ուր նույն պատգամները կգտնէ, հոգ չէ թե երկու ժողովուրդներու քաղաքական թե հոգեկան վերջնական նպատակները նույնը չըլլան: Ինչպես հատորի ընթերցումն ի հայտ կուգա, դարեր պետք եղած են, որպեսզի երկու ազգերն ալ իրենց ազգային հավաքական տենչերուն իրագործումը դուրս բերեն կրոնական ծիրեն և հանգիստ այն եզրակացու-

թյան, թե Աստուծո պետք չէ վստահիլ մարդ-արարածին փրկությունը ուրիշ մարդ-արարածի մը բռնութենեն:

Ըստ իս, տոքթ. Ռուբինա Փիրումյանի բազմակողմանի արժեք ներկայացնող այս գործը կարևոր նպաստ մըն է թե՛ հայ գրականության, թե՛ հայ պատմության և թե՛ Հայկական Յեղասպանության պատմության: Գործը ունի բոլոր կարելիությունները ավելի ընդարձակ և տարածուն ըլլալու, թեև համեմատաբար ամփոփ այս ուսումնասիրությունը ավելի հավանականություններ ունի կարդացվելու և մատչելի է ընթերցողներու ավելի լայն խավի մը, ինչ որ, ըստ իս, կարդարացնե հեղինակին նպատակը: Գրադարանի մը մեջ հանգչող հաստափոր գիրք մը կրնա օգտակար ըլլալ միայն փոքրաթիվ գիտնականներու: